

ՀԱՅ ԳԻՒՂԸ ԱՌՈՂՋՍՊԱՀԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ*).

V.

Անունդ եւ սննդառութիւն.

Պէտք է ասած, որ մեր գիւղացին՝ մնունդի կողմից՝ շատ անյաջող պայմանների մէջ է, նա շատ տարիներ և շատ տեղերում ոչ միայն բաւարար մնունդ չունի. այլ՝ ուղղակի՝ կիսաքաղցած է, մանաւանդ լեռնային շրջաններում, ուր կիսաքաղցածութիւնը՝ թէ անընթերիութեան՝ թէ սակաւահովութեան և թէ տղիտութեան պատճառներով՝ դառել է յարատե (քրօնիքական):

Իսկ թէ ինչ վտանգաւոր րան է քաղցածութիւնը (գոլոցանի), դորս մասին մէնք զրել էինք «Առողջապահիկ» ում. բայց լրացնենք մէր զրածը Պիրօզօվեան համագումարում թժ. Տարասկչի արած զեկուցումից, «սովածութեան մտսին» (օ տօլօձանի, Պարոց. տեղանք, ապրիլ 1907 թ.): Սովորաբար մարդկանց համար մննդի նորմալ քանակութիւնը հետևեալն է. սպիտակուց (Եֆլուէ) 118 զրամ, ճարպ (յիր) 50,0, ածխաջրեր (յուլեզու) 500,0. իսկ կանանց՝ 94,0—50,0, 400,0. սպիտակուցի համար պահանջվում է 230,0 միս, հաց՝ 400,0. Սպիտակուցի ամենաշնչին քանակութիւնը, որ կարեոր է մեր կազմուածքի համար, հաւասար է 20 զրամ մէկ կիլոգրամ քաշի վերայ: Թէ կենդանական և թէ բուսական մննդինը պարունակում են սպիտակուց, ճարպ և ածխաջրեր (յուլեզու): Նշանակում է, կարելի է բաւականանալ միայն բուսական մննդեղէնով, ապացոյց զիւղացիները, որոնք մնուում են համարեաբացառապէս բուսական մնունդով: (Փրոֆ. Յավելով է ստուգ. 115.):

*). Մանօթ, Խմբազրութիւնս ի նկատի առնելով, որ «Արարատ»ի ընթերցողների մի ստուար մասը զիւղական քահանաներ են՝ հարկաւոր համարեց ամսագրիս միջոցով առողջապահութեան վերաբերեալ կաթեւոր յօդուածներ տալ գոնէ որոշ չափով կուռելու այն չարիբների դէմ, որ մեր զիւղերում զորդում են առողջապահական կանոնների մասին տարրական հասկացողութիւն չունենալու պատճառով: Այս անգամ ուրախութեամբ զետեղում ենք իւր աշխատութիւններով հայ զրականութեան մէջ յայտնի յարգելի թժշկապետ Բ. Աղասարեանի կարեւոր յօդուածը՝ որի I, II, III եւ IV զույգները տպուած են «Աղբիր-Տարագցի յաւելուած «Առողջապահ» թերթում:

Միայն այդ երկու տեսակ մնունդի զանազանութիւնը նորա մէջ է, որ բուսականի քանակութիւնը աւելի մեծ պէտք է լինի, քան կենդանականը, որովհետև առաջինը դժուարամարս է և նորա սպիտակուցի 20°/₀—40°/₀ դուրս է գնում կղկղանքի հետ. իսկ երկրորդը՝ համարեա բոլորովին մարսում է:

Հաշուած է որ մէկ գրամ (1,0) սպիտակուցը (Ենոք) տալիս է մարմնին 4,1 կալորի^х):

1,0 օսլան—4,1 »

1,0 ճարպը—9,9 »

Այսպէս որ մեր մարմինը պիտի ստանայ՝ միջին թուով՝ 2400—3800 կալորի, որոնք ծախսում են՝

1.) Մեքենայական աշխատանքի վրայ	350	կալորի.
2.) Կերակրի և ըմպելի ջրի տաքացնելու վրայ	50	»
3.) Ներշնչող օդի տաքացնելու	100	»
4.) Ածխաթթուի գազաձև գարճնելու	100	»
5.) Ջրի շոգիացման թոքերի ներսից	350	»
6.) Նոյնի մորթու մակերևոյթից	250	»
7.) Մորթուց արտացոլման (ազլց.) և ջերմութեան արձակմ. հաղորդակցման (պրօճ.)	1,900	»
	3100	կալորի.

Այս հաշուած մեր մարմի մէջ գոյացող ջերմութեան $\frac{2}{5}$ կորչում է մորթուց վիրոյիշեալ կերպով:

Մեր գիւղացց սնունելը, նա աւելի քան անբաւարար է. նա հազիւ տարին մի քանի անգամ մսի համ է տեսնում. նրա կերպակուրը լոկ բուսեղէն է, գլխաւրապէս հաց: Լու է եթէ հացը կարելի է լինում բաւարար չափով ունենալ: Վերոյիշեալ բժիշկ Տարասեիչը զրում է, «Ծուսաց պատմութիւնը սովի պատմութիւն է: Սովը Ծուսաստանում ոչ թէ սրբնթաց (օստրայ) երևոյթ է, այլ քրօնիքական երևոյթի սրբնթացութիւն (օбоւորու): Ծուսաստանում միայն 10 միլիոն կերակրում են առատօրէն. 33%՝ հազիւհազ (ելե-ելե), մնացածները կիսաքաղցած են (живутъ впроголодъ): Հացի աեղ գործ են ածում քաղցած հաց (голодн. хлѣбъ, изготовл. изъ берѣзы, корней комыши и т. п.)**):

Գիւղացիների կերակուրը ոչ միայն անբաւարար է, այլ և անմարս: Յայտնի առողջարան Բուրնէրի կարծիքով՝ 60—70% սպիտակուց (Ենոք) պէտք է լինի կենդանական ծագումից:

*) Կալորի, տաքութեան այն քանակը, որը հարկաւոր է մէկ գրամ ջուր բարձրացնել մինչեւ մէկ աստիճան տաքութեան:

**) Այդ տեսակ հաց ցուցադրել էր խարք. մեծ. օբщ. համառուս. առողջ. ցուցահ. 1915 թ. Պետերբ.

Սովածութիւնը լինում է կատարեալ—(ողոք) և անկատաբ (ողոքութեալութեալ)

Խօսենք վերջինիս մասին, որը յաճախ պատահող երևոյթ է գիւղացցոց մէջ, Այդ դրութիւնը ունի շատ վատանգաւոր կողմերա նա ոչչացնում է կազմուածքի դիմացկանութիւնը (ուսումնականութեալութեալութեալ) վարակիչ հիւանդութիւնների դէմ, ահա ինչու տիֆերից ամենաերկիւղալին-բժաւոր տիֆը կոչում է սովային—(ողոքանականութիւնը, որը յաճախ երևում է բանտերում, շոգենաւերի վրայ ևայլն ևայլն:

գ) Նա աւելացնում է մահացութեան տոկոսը՝ աւելացնելով նորան 137 հազարի վերայ, փոխանակ նորմալ տոկոսի՝ 35—37. հազար բնակչի վրայ:

դ) Նա առաջացնում է այլասեռութիւն սերնդի. եթէ ծնողները լաւ չեն կերակրում, սերունդը լինում է թոյլ անկինսունակ. օրինակ, Պարիզում 1893 թ. զինուորագրութեան ժամանակ եղել են շատերը անպէտք, որովհետեւ նրանք ըեղմաւորուած են եղել (նաև առաջական առաջական անդաման ժամանակ, երբ տիրում էր սովութիւնը):

ե) Սովը աւելացնում է յանցագործութիւնը, մանաւանդ սեպչ հականութեան դէմ:

զ) Սովը ներգործում է և մարդու հոգեկանի վրայ, առաջացնելով բացակայութիւն նախաձեռնութեան, կամքի և եռանդի թուլութիւն, ապատիա—անզգայութիւն:

Եթէ ոռւս գիւղացին՝ վերցյիշեալ բժ. Տարասենիչի ասելով, մնունդի կողմից սարսափելի դրութեան մէջ է գտնուում, նոյնանման պայմանների մէջ է և մեր գիւղացու շատ մասը շնորհիւ անքերի իրութեան, աղքատութեան, մանաւանդ վերջին տարիները: Հայ գիւղացու զբացիներ գերման, ոռւս և մահմեղական ազգաբնակութիւնները, այդ կողմից աւելի բարեյաջող դրութեան մէջ են. նրանք՝ առաջինը հոգի պակասութիւն չեն զգում, և երկրորդը իրանց գիւղատնտեսական գործերի մէջ աւելի կուլտուրական, թուրքերը բերրի և ջրարքի հող ունենալով, կարողանում են արդիւնաւոր աշխատանք ունենալ քան հայ գիւղացիք: Բացի գրանից նրանք՝ գերման և ոռւս զալթականները սովոր են առնասարակ լաւ ապրել իրանց միջոցներով, որին սովոր չէ մեր գիւղացին, եթէ անգամ նա ունի միջոց: Մերոնց կուլտուրական գրացիները կանոնաւոր ապրում են, ուտում, հագնուում, չխնայելով հարակուր միջոցների: Հայ գիւղացին, թէ ինքն է վատ ապրում և թէ իւր տնային կենդանիներին վատ խնամում: Դա արդէն յաճախ ոչ թէ աղքատութիւնից է, այլ տպիտութիւնից: Մերոնց մօտ կերակուր պատրաստելը շատ քիչ է պատահում. իսկ գիրմանա-

ցիների և ոռւսների մօտ համարեա ամեն օր կերակուր է եփւում, ոչ սակաւ մսեղէն և այլն։ Հայ գիւղացին ըստ մհծի մասին կերակրում է հացով. միսը շատ և շատ սակաւ անդամ. հարսանիքների, ննջեցեալների, ուխտագնացութեան ժամամակ և մհծ տօներին։ Լաւ է եթէ բաւարար է հացը կամ դիոնախնձորը. շատ անդամ գիւղացին զուրկ է միջոցից ունենալ նրանց բաւարար չափով. ասել է թէ կիսաքաղց է լինում. մանաւանդ լեռնային շրջաններում, ուր բացի հացարոյսերից և գետնախնձորից համարեա ոչ մի ուրիշ սննդաբար բուսեղէն չի բռւսնում և չգիտեն բուսացնել։

Յաւելում.

Յայտնի հանգ. պրօֆ. Կաշուրինի փորձերը և զիտողութիւնները շատ հետաքրքիր են. փորձերը արուել են շների և ճագարների վերայ. եթէ սնունդը մի քիչ անբաւարար է, ($1/10 - 1/5$ պակաս) ազդեցութիւնը սերունդի վերայ նկատելի է. թէև կշիռը զգալիօրէն չէր պակսում, բայց նորա կազմուածքի կարծր մասերը զգալիօրէն պակսում էին՝ $23,4^0/0 - 18,5^0/0$, պակսում էր ճարպի, փոսֆօրի քանակութիւնը, և սուր կերպիւնուազել (пониж.) կենառնակութիւնը. Երբեմն ծնւում էին մեռած սաղմեր (плоды), երբեմն ծնւում էին կենդանի, բայց մեռնում էին չնշին պատճառներից. Միացեալ (комбин.) ազդեցութիւնը արուի և էզի աւելի զօրեղ է քան մէկի. աւելի մօր, քան հօր եթէ քաղցածութիւնը տեսում է շատ երկար, այն ժամանակ որձերի սեռական ընդունակութիւնը (проязвод. ձեյար.) նուազում է. եթէ կշռի կորուստը համնում է $26^0/0$, նա միանգամայն կորչում է: Նոյն երեսյթը նկատում է կեանքում. օրինակ՝ Պարիզի պաշարման ժամանակ՝ ինչպէս ցոյց տուեց ստատիստիկան 90 թուականների զինւորագր. ժամանակ, մեծ տոկո թոյլ, անպէտք զինւորական ծառայութեան համար, թէ հասակի, թէ թուլութեան պատճառով, և այլն. բացատրուեց, որ նրանք բեղմնաւորուել և ծնուել են Պարիզի պաշարման ժամանակ. նրանց կոչում էին՝ enfants de siège: Նոյնպէս մեծ տոկո երեխայ մահացան պատերազմից յետոյ *):

VJ.

Վաղաժամ ամուսնութիւն

Մենք պիտի ընդարձակօրէն խօսենք վաղաժամ ամուսնութեան վտանգաւորութեան մասին: Նախ քան անցնելը այդ հար-

*) Здоровье и болезнь, проф. Тарасевича ст. 469 «Итоги науки» т. VII—1913 г.

ցին պիտի մի փոքր շեղում թոյլ տանք մեզ, որպէսզի աւելի ևս ապացուցուի վերոյիշեալ վտանգաւորութիւնը:

Շատերը ազգերի կուլտուրական յառաջադիմութեան աստիճանը որոշում են այս ինչ կամ այն ինչ երևոյթներով. հոչակառ գերմանական քիմիկոս Լիրիկով՝ սապոնի գործածութեան չափով, բայց աւելի ճիշտ կլինի այդ չափը որոշել՝ ի միջի այլ երևոյթների, կանանց սեռի գրութեամբ, նրանց համեմատական քանակով տղամարդկանց հետ: Բերենք մէկ փոքր համեմատական ստատիստիկա.

Ազգաբնակութիւնը ըստ սեռի՝

Եւրոպայում կանայք տղամարդկանցից աւելի են $1,70/\text{մ}^2$ -ով

Ասիայում՝ ընդհակառակը. պակաս $5,23/\text{մ}^2$ -ով

Աֆրիկայում՝ $3,50/\text{մ}^2$ -ով

Տղամարդիկ շատ են այնտեղ, ուր կանայք ստրկացած են, ուր աւելի մեծ աշխատանք է գրուած նրանց վերայ, ուր նրանց մահցութեան տոկոսը զանազան պատճառներից մեծ է, ուր, կաւելացնենք՝ լինում է վաղաժամ աճուսնութիւն:

Ահա մէկ փոքր ազիւսակ. 100 տղամարդկանց վերայ գալիս է՝

1. Շվեյցիայում՝ $105-106,5$

2. Նորվիգիայում՝ $103,6-103,5$

3. Անգլիայում՝ $105,0-105,7$

4. Ֆրանսիայում՝ $105,0-105,0$

5. Պրուսիայում՝ $103-103,2$

6. Ռուսաստանում՝ $102 *)$

$1860-1880$ տարեցրջաններում

7. Լօնդօնում՝ ազգաբնակութիւնը $4^{1/2}$ միլիոն՝ 100 տղամ.՝
112 կին, $100,000$ անպատճեալ կին, $200,000$ այլի կին (1914 թ.)

Մի ուրիշ աղիւսակ.

Ռուսաստանի 50 նահանգներում՝

ազգաբնակութիւն արական սեռի 45 միլիոն
իգական \triangleright 47 \triangleright

Ամբողջ Ռուսաստանում՝ արակ. 63 \triangleright

իգակ. 64 \triangleright

Միջին Ասիայում՝ արական 4 \triangleright

իգակ. $3,5$ \triangleright

Կովկասում՝ հայ ազգաբնակթ. արական $640,000$
իգական $553,276 **)$

*) Թագիկոպեդ. սլովար Բրոկгауза и Ефронա. т XX — 1897.

**) Գարգէն վարդապետ, Էջմիածնի կալուածքներ. 1908 թ.

Այժմ հայերի թիւը աւելի մեծ է՝ 1,600,000 ըստ Կալկաղի օրացոյցի (Կալենդ. 1913 թ.)

Վրացիք՝ Կախեթում՝ արական	91,486
իգական	77,391 *)

Տաճկաստանում՝ ՏԻՆ դար, ՏԽ դար,

Աղքարնակ.	24,716,000	24,078,000	780,000 պակաս:
-----------	------------	------------	----------------

Չենք կարող անուշադիր թողնել մեր գիւղացիների մի ամենաքստանելի սովորութիւնը, որից չարաչար տուժում են կանանց սեռը և մանուկ սերունդը: Դա վաղաժամ ամուսնութիւնն է, որի մասին յաճախ կարդում ենք մեր լրագրերում, ինչպէս և այժմ զանազան տեղերից գրած թղթակցութիւնների մէջ, հենց այս քանի օրերս Խանլուխլար գիւղից «Հորիզոնում»:

Իմ հանգուցեալ բարեկամ Համբարձում աղա Հախումեանցը, որի անունը յայտնի է շատերին, իրք մի խելօք, աղքասէր անձնաւորութիւն, մանաւանգ Ղարաբաղում, վաղաժամ ամուսնութեան առթիւ ասում էր հետեւեալը. «Ինձ պսակեցին մի փոքրիկ գեռահաս աղջկայ հետ, Մելիք-Շահնազարեանի տոհմից, որը եկել էր մեր տուն իր տիկինիկով և ինչպէս երեխայ խաղում էր. (նոյնը պատմում էր և ինքը ամուսինը) և այդ գեռահաս ամուսինը տարիներով անկողնում էր լինում, որով թէ ինքն էր տանջւում և թէ ես Այդ տեսակ ամուսնութիւնը ծնողների կողմից որդեսպանութիւն է, որը՝ ի հարկէ, ծնողների տգիտութեամբ միայն կարելի է բացատրել»:

Ես շատ իմ զբաղուել այդ հարցով, խօսել և գրել իմ զրամասին իմ պաշտօնավարութեան ժամանակ, դիտելով վաղաժամ ամուսնութեան սարսափելի հետեանքները մանկահասակ ամուսինների վրայ, որի մասին կխօսենք յետոյ:

Մեր բազմաշխատ թժ. Տաղաւարեան իւր հետաքրքիր զբքի մէջ (Ծննդական գործարանի կազմախոս. հլն. 1899) խօսում է նոյն հարցի մասին.

«Այս կանայք, որ կամուսին կամուսնանան, իրենց ամուսնութեան առաջին տարիներու մէջ յաճախ ամուլ կմնան. կլծնանին փոքրիկ, տկար զաւակներ և վիժմանց կենթարկին:

Դիուատի կանայք անկարող են տոկալ յղութեան, որդեմնութեան արեան կրոստի ծանրութիւնից իրենց արգանդի կապերը կը թուլանան, արգանդը վայր կիջնայ, կծոփ ու կհիւանդանայ և շատ անդամ երիտասարդ կմեռնին»:

Իսկ եթէ իմանանք, որ մեր գիւղական կանանց սեռը ծընն-

*) Մեдико-топограф. опис. Кахетію докт. Аквледіані. 1910 թ.

**) Южаковъ рус. богатство № 7, 1909 թ.

դարերութեան ժամանակ կդանուեն տգէտ տառմէրների, իսկ դժուար դէպքերում՝ հասարակական խաշնաբածների հոգածութեան տակ, երբ հարկաւոր է օպերացիա անել, վերջինները որպէս փորձուած, անսառնների վրայ իրանց կատարած օպերացիաներուվ, կատարում են և կանանց վրայ. Ո՞հ, ինչքան մեծ կարիք կայ մեր գիւղերում ուսիալ մանկաբարձուհիների:

Ամուսնացողների հասակի առթիւ գրել է բժ. Թ. Զաքարեանցը իր հետաքրքիր զքոյկի մէջ. «Ամուսնական առողջապահութիւն» վերնագրով 1897 թ. հետևեալը. «Գիտութիւնը և վիճակագրութիւնը ցոյց են տալիս, որ հասակը մեծ նշանակութիւն ունի թէ որգեծնութեան և թէ ամուսինների ու նրանց զաւակների առողջութեան համար»:

Բժ. Բերդիլիսնի վիճակազրութիւնը՝ ֆրանսիայի կանանց վերաբերմամբ, ցոյց է տալիս, որ այն ժամանակ, երբ 20 տարեկանից յետոյ մարդու զնացած կանայք տալիս են միայն $70/0$ մահ, այդ հասակից առաջ ամուսնացողների մահը հասնում է մինչև 500 տ. . . Նոյն է նկատում և տղամարդկանց վերաբերմամբ: Մի ուրիշ ֆրանսիացի գիտնական ապացուցանում է, որ 16—20 տարեկան ամուսնացածները 8 անգամ աւելի մահ են տալիս, քան թէ նոյն հասակի ամուսինները: 21—25 տարեկան հասակում ամուսնացածները աւելի քիչ են հիւանդանում և աւելի քիչ են մեռնում, քան չամուսնացածները:

Գալով երեխաններին՝ նկատում է հետեալը. 20 տարեկանից պակաս հասակ ունեցող մայրերի զաւակները տալիս են $22,10/0$ մահ, մինչդեռ 20—30 տարեկան մայրերինը միայն $12,85/0$: Բացի դրանից առաջինի զաւակները թոքախտից մեռնում են երկու անգամ աւելի, իսկ կազմուածքի ընդհանուր թուլութիւնը երեք անգամ աւելի, քան չափահաս մայրերի զաւակները: Այդ բանը նկատելի է կենդանիների և պտղատու բոյսերի վրայ ևս: Ծնողների տարիքը ահագին նշանակութիւն ունի զաւակների երկարակեցութեան վերայ: Բառ Կօրօօզի (Korosi) աւելի երկարակեաց են նրանք, որոնց հայրերը ունեցել են $25—40$ տարիք, իսկ մայրերը՝ $25—35$ տարիք: 40 տարիքից վեր սերունդը նոյն երկարակեցութիւնը չի ունենալ. նոյնպէս փոքր տարիք ունեցող ծնողներինը: Պիտի աւելացրած, որ երկարակեցութիւնը յաճախ լինում է ժառանգական: Մէկ ծերունի՝ Francois Noaillé վախճանուել է 119 տարիքում, ունենալով զաւակ 100 տարեկան: Մէկ ամերիկացի Baglioni, վախճանուել է 114 տարիքում, որը ունեցել է երեք կին, որոնցից վերջինը 30 տարեկան է, որին նա սեռական բաւականութիւն էր տալիս *), Գալով հայերիս վաղաժամ ամուս-

*) Zamedecine internationale, № 2, 1913 ան.

նանալու սովորութեան, դայ՝ մասամբ՝ բացատրում է տղիտութեամբ և մասամբ էլ պատմական պայմաններով, պարսիկների և տաճիկների տիրապետութեան ժամանակներից։ Յայտնի է, որ այդ ժամանակներում մանկահասակ և սիրուն աղջիկներ ունենալը մի պատռհաս էր ծնողների համար, որովհետ զո՞ն էին դառնում յափշտակութեան, գերի էին տարւում խաների և փաշաների հարեմների համար։ Այդ պատճառով ծնողները շուտով մարդու էին տալիս։ Պատմում են, որ XVIII դարու վերջիներին Երևանի խանը կամենալով իւր որդու համար հարեմ պատրաստել, հրամայել էր հաւաքել Արարատեան նահանգում գտնուող բոլոր կոյս աղջկանց, որպէսզի նրանց միջից ընտրի ամենասախուններին։ Ղուկաս կաթողիկոսը այդ իմանալով հրաման արձակեց, որ բոլոր աղջիկներին, սկսած 9 տարեկանից պսակեն։ Պահկուողների թիւը այնքան մեծ էր, որ եկեղեցիներում տեղ չինելու պատճառով, թունիրների վերայ էին կատարում պսակադրութիւնը, երբ խանի մարդիկ հասան գիւղերը, ոչ մի տեղ այլ ևս ութ տարեկանից վեր աղջիկ չկարողացան գտնել։ Ահա այդ տեսակ պայմանների աղջեցութեան տակ են մշակուել եկեղեցական օրէնսդրութիւններից շատերը, որոնք այժմ կորցրել են իրանց նշանակութիւնը։

«Վիճակագրութիւնը ցոյց կտայ, որ 15—19 տարեկան մանկամարդ կանայք 2 անգամ աւելի կմեռնեն, քան նոյն տարիքով օրիորդք, 20 տարեկանէ առաջ ամուսնացող կանանց մահը 500/0, իսկ վերջինը յիշեալ տարիքից յետոյ 70/0։

Վերջապէս 16—20 տարեկան ամուսնացածներէն 8 անգամ աւելի մահ կուտան, քան նոյն հասակի ամուրիները։

Դեռատի ամուսնացողաց զաւակներն էլ տկար, թոյլ և հիւանդ կլլան։ 20 տարեկանէն նուազ տարիքներու զաւակաց 22,20/0 կըմեռնի. մինչդեռ 20—30 տարեկան ամուսնացողներու զաւակաց 12,850/0 միայն։»

Բժ. Տաղաւարեանը առաջարկում է, որ աղջկերը արբունքի հասնելէն 5 տարի վերջ, իսկ այրք տասն տարի հոր, այնպէս որ վերջինները 10 տարուց աւելի չինին կանանցից։

«Ամուսնութիւնը աղջկանց 35, և արանց 45-է վերջ առողջապահիկ չեմք համարեր։»

Յայտնի հրէայ գրող Նոր-Դաու (Нордай) գրում է իւր մէկ աշխատութեան մէջ (քենա Մաքս-Նորդայ; ուր. ու նեմէցեց 1903 թ.) «Հրէական աղջը պիտի խուսափի վաղաժամ ամուսնութիւնից։ Դեռահաս երիտասարդների և օրիորդների ամուսնութիւնը ապացոյց է մեր արևելան ծագման և նա կազմում է հիւանդային խլիրտ (болեզնեն, նարօտъ) մեր աղջի կազմուածքի վրայ։ Դա է պատճառը, որ հրէայ կինը վաղաժամ թառամում է,

թուամում կյան.. Եթէ մենք կարողանանք մեր եղբայրներին արևելքում ստիպիլ որ նրանց ամուսնական հասակը բարձրանայ 8 տարով, մենք դորանով ահազին ծառայութիւն արած կլինենք մեր ցեղին:

Հոչակառը թժ. և գրող Նոր-Դառուի կարծիքը ամուսնական հարցի մասին յոյժ կարեոր է և մեղ համար, որովհետև մեր ցեղը նոյն պայմանների մէջ է գոտնում և նոյն վնասակար աւանդութեան ճնշման տակի Մեր մամուլը այդ հարցի մասին շատ է գրեթ մանաւանդ ճնորհալի զրող Ա. Տէր-Աւետիքեանը*), որի ռձակատին էն էր զրուած և մի հիանալի նկարագրութիւն է մի քսալմնելի գէպքի, երբ 11 տարեկան աղջիկը բռնի կերպով տալիս են 30 տարեկան մարդի, որի մօտից առազատի գիշերը փախչում է ծնողների տունը, ասելով միամտօրէն, անա ինձ փիս բան է անում: Ծնողները ծեծում են, զիւղի պատաւ կանայք չարչարում են խեղճին, ստիպելով, որ նա գնա իւր մարդու մօտ և հնազանդուի նրա կամքին: Խեղճ երեխան մանում է թռնիր և այստեղ էլ մենում: (Ախտոս չի բացատրուած թէ ինչից է մեռնում, ոգի փչանալուց, թէ ուրիշ բանից): Բայց, թէ ծնողները, թէ զիւղացիք և թէ քահանան, ոչ մի յանցանք, խեղճ խայթ չեն զգում և չեն զիստակցում: որ իրանց խորին տղիտութեան դո՞ւ է գնացել ողորմելի փոքրիկ աղջիկը: Արժէ այդ գիրքը ապածել զիւղերում:

Վերոյիշեալները աւելի քան համոզեցուցիչ են, որ տգէտ հասարակութեան և ազգերի մէջ կանանց սեռ պակաս են այր մարդկանցից և դրա ամենազիստառը պատճառներից մէկը, նորա մեծ մահացութիւնն է, մանաւանդ այն տեղերում, ուր վազաժամ ամուսնութիւն է լինում, ինչպէս մեղ մօտ, մանաւանդ զիւղերում: Էլի շնորհիւ զինուորագրութեան այժմ համեմատաբար աւելի սակաւ է լինում այդ տեսակ ամուսնութիւնը: Ներկայումս, եթէ մեր զիւղական տարրի մէջ լինում է ապօրինի կենակցութիւն, դրա պատճառներից գլխաւորը կանանց հիւանդութիւնն է, որոնք շատ շուտով դասնում են անընդունակ ամուսնական կեանքի համար, ստանալով այսպիսի տկարութիւններ, որոնց մասին յիշեցինք վերև:

Այդ հարցի մասին մենք մեր երկար պաշտօնավարութեան ժամանակ շատ ենք զրուցել մեր զիւղացիների հետ, որոնք մեղդադրում են զիստակապէս քահանանաներին, որոնք փսդի համար ամեն բան պատրաստ են անելու: Ոչ սակաւ մեղաւոր են իրանք ծնողները, շնորհիւ խորին տղիտութեան, կոպատութեան և անար-

*) Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմուածքներ, հրատ. Կ. Հ. Հրատարակչական Ընկերութեան, 1942 թ.

դար վերաբերմունքի դէպի իրանց աղջիկ զաւակները, որոնց «ուրիշի ապրանք» են համարում և աշխատում են շուտով գլխից հանել, չմտածելով հետևանքի մասին։ Յայտնի է, որ երբ ամուսինները հիւանդանում են, մարդիկ իրանց ամուսիններին յետ են ուղարկում շատ անգամ հերանց տուն, ուր շատերը երկար տանջուելով մահանում են, իսկ այր ամուսինները ապօրինի կենակցում են ուրիշ կանանց հետ։ Այդ փաստ է, որ ընդհանուրանում է, մանաւանդ չնորհիւնքա, որ քահանայք իրանք զրկուելով ամուսիններից, ապօրինի կենակցութիւն են ունենում։

Աւելի քան հասունացած է այն հարցը, որ քահանաներին թոյլատրուի կրկնամուսնութիւն, որը թէ աղգային և թէ բարոյական տեսակէտից մի անհրաժեշտութիւն է։ Փաստ է, որ քահանան չի կարող առանց ամուսնու, մանաւանդ եթէ սա ունի երեխաներ, ապրիլ վասն որոյ նրանք պարտաւորեալ պահում են իրը տան տնտեսունիւնիր, որոնցից յաճախ ունենում են երեխաներ։ Պահանջել քահանանակերից, մանաւանդ գիւղական՝ լինել «սուրբ» նշանակում է սպասել անկարելին, քահանան՝ նախ և առաջ մարդ է մարդկային բնախօսական պահանջներով և այլն։ Կրկնում ենք, պէտք է կրկնամուսնութիւն թոյլատրել քահանաներին։ և ես համոզուած եմ, որ հայ ինտելլիգենտ և բանիմաց դասակարգը՝ թէ հոգևոր և թէ աշխարհական՝ չի բողոքիլ դորա դէմ։

(Եարունակիլի)

բժ. Բ. Աղասարեան



ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՒԱՆԻ

ԵԿԵՂԵՑ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ 1913 Թ. ՀԱՇԻՒԼ.

Վերջին տարիներմ «Արարատ»ի էջերում աշխատել ենք համառօտ տեղեկութիւններ հազորդել Ն. Նախիջեանի Հայոց աղքատախնամ հոգաբարձութեան գործունէութեան մասին, որը մեր Ռուսահայոց մէջ աղզային-հասարակական բնոյթ կրող ամենահամակրելի և արդիւնաւէտ գործունէութիւն ցոյց տուող հաստատութիւններից մէկն է։

Իւրաքանչիւր տարի այդ հոգաբարձութիւնը իւր հաշիւները ներկայացնելով քաղաքի վեց եկեղեցիներից ընտրուած վաթուուն պատղամաւորների ընդհանուր ժողովին, ապա մանրամասն հաշիւ է հրատարակում նաև, թէ հայերէն և թէ ոռւսերէն, հասարակական բոլոր խաւերին և